

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Տ Ա Վ ՈՒ Շ Ի Մ Ա Ր Զ

Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

02 հունիսի 2018թ.

ՕՐԱԿԱՐԳ

2018թ. հունիսի 2-ին ժամը 15⁰⁰ –ին կայացած
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՆՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

1. Մարզի համայնքների տեղական բյուջեների 2018թ. հինգ ամսվա կատարողականների մասին

Զեկուցող՝ Ռ.Ներսեսյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

2. ՀՀ Տավուշի մարզում գյուղատնտեսության ոլորտում 2017թ. կատարված աշխատանքների և 2018թ. հիմնախնդիրների մասին

Զեկուցող՝ Վ. Սուքոյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

3. Այլ հարցեր

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի

02.06.2018թ.
ք.Իջևան

Նիստը վարում էր Տավուշի մարզպետ Վ.Ղալումյանը:
Մասնակցում էին՝

ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարար պարոն Ս. Պապիկյանը:
Մարզխորհրդի 25 անդամներից ներկա էին 25-ը:

Նիստին ներկա էին՝ ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալները, մարզպետարանի աշխատակազմը, մարզի դպրոցների և առողջապահական հիմնարկների տնօրենները, տարածքային զինկոմիսարները, հանրապետական գործադիր մարմինների տարածքային մարմինների ղեկավարները, լրագրողներ, հրավիրվածներ և այլք:

2. Մարզի համայնքների տեղական բյուջեների 2018թ. հինգ ամսվա կատարողականների մասին

Ձեկուցող՝ Ռ.Ներսեսյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

2018 թվականի հունիսի 1-ի դրությամբ մարզի համայնքների եկամուտների փաստացի մուտքը կազմել է 1394.5 մլն. դրամ, որը կազմում է հաշվետու ժամանակաշրջանի նախատեսվածի 96.6 %-ը, իսկ սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 378.6 մլն. դրամ կամ կատարվել է 88.5 %-ով: 2017 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամուտները ավել են հավաքագրվել 88.8 մլն. դրամով:

Ըստ առանձին եկամտատեսակների սեփական եկամուտների կատարողականները ս/թ հունիսի 1-ի դրությամբ հետևյալն է.

- հողի հարկ – հինգ ամսվա նախատեսված 75.3 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 66.8 մլն. դրամ կամ կատարվել է 88.7 % - ով, 2017 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է հավաքագրվել 5.6 մլն. դրամ, (Բերդ համայնքը նախորդ տարվա համեմատությամբ ավել է հավաքագրել 5.8 մլն.դրամ): (Ցածր կատարողական ունեցող համայնքներ Լուսածոր 32.2%, Լուսահովիտ 33.0%, Գետահովիտ 35.4%, Իջևան 37.2%, Խաչթառակ 49.9%, Կողբ 56.9%, Աչաջուր 59.2%),

- գույքահարկ - հինգ ամսվա նախատեսված 161.3 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 127.0 մլն. դրամ կամ կատարվել է 78.7 %-ով, 2017 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է հավաքագրվել 11.9 մլն. դրամ, (Ցածր կատարողական ունեցող համայնքներ Խաշթառակ 32.5%, Լուսաձոր 35.3%, Վազաշեն 44.7%, Գետահովիտ 47.5%, Աչաջուր 53.0%, Ենոքավան 60.4%, Իջևան 61.9%, Այգեհովիտ 63.8%),

- տեղական տուրքեր – հինգ ամսվա նախատեսված 20.5 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 16.4 մլն. դրամ կամ կատարվել է 80.1 %-ով, 2017 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է հավաքագրվել 2.2 մլն. դրամ, (Ցածր կատարողական ունեցող համայնքներ Ենոքավան 2.4%, Գետահովիտ 20.0%, Խաշթառակ 29.9%, Աչաջուր 52.7%, իսկ Այգեհովիտ, Լուսաձոր, Ն. Ծաղկավան, Կիրանց համայնքներն ընդհանրապես գումարներ չեն հավաքագրել),

- գույքի վարձակալությունից եկամուտներ – հինգ ամսվա նախատեսված 44.1 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 36.0 մլն. դրամ կամ կատարվել է 81.8 %-ով, 2017 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է հավաքագրվել 8.0 մլն. դրամ, (Ցածր կատարողական ունեցող համայնքներ Լուսաձոր 0.8%, Դիտավան 7.6%, Աչաջուր 18.2%, Կողբ 20.7%, Խաշթառակ 42.9%, Այգեհովիտ 47.8%, Իջևան 57.2%, Ենոքավան 72.1%),

- տեղական վճարներ – հինգ ամսվա նախատեսված 110.9 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 113.4 մլն. դրամ կամ կատարվել է 102.2 %-ով, 2017 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է հավաքագրվել 55.4 մլն. դրամ (Ցածր կատարողական ունեցող համայնքներ Ենոքավան 28.6%, Դիտավան 31.2%, Սարիգյուղ 66.4%, Սևքար 67.1%, Խաշթառակ 68.4%, Աչաջուր 83.5%):

Ցածր կատարողական ունեցող համայնքների ղեկավարներին առաջարկվում է ամենօրյա հետևողական աշխատանքներ տանել և ձեռնարկել կտրուկ միջոցներ տեղական բյուջեով նախատեսված սեփական եկամուտները հավաքագրելու ուղղությամբ:

Համայնքների ղեկավարներին առաջարկվում է ամենօրյա հետևողական աշխատանքներ իրականացնել տեղեկատվական համակարգի տվյալները ճշգրտելու և հավաքագրված հողի հարկի ու գույքահարկի գումարները տեղեկատվական բազա մուտքագրելու ուղղությամբ:

2018 թ. մայիսի 1-ի դրությամբ համայնքներն ընթացիկ տարվա աշխատավարձերը վճարվել են ամբողջությամբ: Աչաջուր համայնքը նախորդ տարվա 3.7 մլն. դրամ պարտքերից 01.05.2018 թ. դրությամբ պարտք է մնացել 1.4 մլն. դրամ:

Տավուշի մարզպետ Վ.Ղալումյանը առաջարկեց համայնքների ղեկավարներին.

1. Ընդունել ի գիտություն մարզի համայնքների 2018 թվականի տեղական բյուջեների սեփական եկամուտների հինգ ամիսների կատարողականների մասին հաղորդագրությունը
 - 1.1 Ձեռնարկել միջոցառումներ 2018 թվականի տեղական բյուջեներով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրումն ապահովելու համար:
 - 1.2 Ամենօրյա հետևողական աշխատանքներ իրականացնել հողի հարկի և գույքահարկի ընթացիկ և նախորդ տարիներից կատարված մուծումները տեղեկատվական բազա մուտքագրելու ուղղությամբ:
 - 1.3 Միջոցներ ձեռնարկել հողի հարկի ու գույքահարկի բազաների ճշգրտման ուղղությամբ:
- 2 Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ՀԳՄ հարցերով վարչության պետ Մ. Մխիթարյանի վրա:

2. ՀՀ Տավուշի մարզում գյուղատնտեսության ոլորտում 2017թ. կատարված աշխատանքների և 2018թ. հիմնախնդիրների մասին

Զեկուցող՝ Վ. Սուքոյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Գյուղատնտեսությունը հանդիսանում է ՀՀ Տավուշի մարզի տնտեսության հիմնական ճյուղը, ուստի մարզի զարգացման ռազմավարությունը կապում ենք այդ ճյուղի հետ: Մարզը ունի հնարավորություններ թե նոր աշխատատեղերի ստեղծման, թե բիզնես միջավայրի զարգացման համար:

Մարզում գյուղատնտեսությամբ են զբաղվում 25 հազ. գյուղացիական տնտեսություններ:

Գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը 2017թ.կազմել է շուրջ 39.7 մլրդ. դրամ /23.0 մլրդ՝ անասնապահություն, 16.7 մլրդ՝ բուսաբուծություն/, որը կազմել է ՀՀ գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալի 4.4%:

Մարզի գյուղատնտեսության նշանակության հողատեսքերը կազմում են 110763 հա, որից՝

վարելահող -25588.4 հա

խաղողի այգիներ - 1198.1հա,

պտղատու այգիներ - 704.1 հա
խոտհարքներ - 9401.3 հա
արոտավայրեր - 63065.6 հա
այլ - 10805.4 հա

Բացի վերը նշվածը տնամերձերում ևս կան
խաղողի այգիներ - 158.9 հա,
պտղատու այգիներ - 1871.9 հա

25588.4 հա վարելահողից 7210.7 հա պատերազմական գործողությունների պատճառով չի մշակվում: 2017թ. հունիսի 1-ի դրությամբ 18377.7 հա փաստացի վարելահողից մարզի ցանքատարածությունները կազմել են 8567 հա: 2017թ. աշնանը կատարվել է 3020 հա աշնանացան:

6300 հա ոռոգելի հողատարածքներից 2017թ. ոռոգվել է 4757 հա:

2017թ. շարունակվել են ՀՀ կառավարության որոշումներով հաստատված պետական աջակցության ծրագրերը /գարնանացան սերմացուներ, պարարտանյութեր, դիզելային վառելիք/:

Համայնքների կողմից վճարվել և մարզ է ներկրվել.

գարնանացան գարի - 6.2 տոննա,
գարնանացան ցորեն - 1.7 տոննա,
առվույտ - 394 կգ,
ազոտական պարարտանյութ՝ 346.2 տոննա,
ֆոսֆորական պարարտանյութ՝ 11.0 տոննա,
կալիումական պարարտանյութ՝ 7.6 տոննա,
դիզ. վառելիք՝ 135347 լիտր:

2018թ. հունվարի 1-ի դրությամբ մարզի համայնքներում հաշվառված են 1160 տրակտոր, որից սարքին՝ 789 և 66 հացահատիկահավաք կոմբայն, որից սարքին՝ 43:
Ֆինանսական վարձակալության լիզինգով 2017թ. ձեռք է բերվել US2-82 մակնիշի 5 հատ տրակտոր և գյուղգործիքներ:

«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրով» 85 ֆերմերներ ստացել են 309.4 մլն. դրամ վարկ:

2017թ. հունվարի 1-ի դրությամբ առկա էին 25.3 հա պտղատու և ելակի ինտենսիվ այգիներ, 2017թ. միջազգային ծրագրերի և անհատ ներդրողների կողմից հիմնվեց ևս 44.4 հա, իսկ 2018թ. կանխատեսվում է հիմնել մինչև 350 հա ինտենսիվ այգիներ:

2016թ. մարզի գյուղատնտեսության բնագավառում պետական, միջազգային և այլ դոնոր կազմակերպությունների, մասնավոր ներդրողների կողմից իրականացվել են շուրջ 1.56 մլրդ. դրամի աշխատանքներ, 2017թ.՝ 2.82 մլրդ. դրամի, իսկ 2018թ. նախատեսվում է 5.6 մլրդ. դրամի ներդրումներ:

2017թ. արտադրվել է .

Հացահատիկ, հատիկաղնիկներ - 13152 տոննա

Բանջարեղեն - 7750 տոննա

Բոստան - 1439 տոննա

Կարտոֆիլ - 13602 տոննա

Պտուղ - 11000 տոննա

Խաղող - 9800 տոննա

Խոտ - 58000 տոննա

Մարզում 2017թ. մթերվել է 5106 տոննա խաղող /2016թ.4141տոննա/, այդ թվում՝

<<Երևանի կոնյակի գործարան>> ՓԲԸ Բերդի մասնաճյուղ - 3525 տոննա

<<Երևանի շամպայն գինիների գործարան>> ԲԲԸ Դեբեդավանի գինու գործարան-820 տոննա

<<Իջևանի գինու և կոնյակի գործարան>> ԲԲԸ - 561 տոննա

<<Բերդավանի գինու գործարան>> ԲԲԸ - 200 տոննա

Իջևանի գինու, կոնյակի գործարան ԲԲԸ, <<Էկոգարդեն>> ՍՊԸ /գ.Այգեժոր/, <<Արթուր և Էդիտա>> ՍՊԸ /գ.Զուջևան/ վերամշակող կազմակերպությունների կողմից մթերվել է շուրջ 630 տոննա պտուղ և հատապտուղ ու բանջարեղեն:

Մարզի համայնքներում 2018թ. հունվարի 1-ի դրությամբ անցկացված անասնազխաքանակի հաշվառման արդյունքներով հաշվառվել է.

Անվանումը	2018թ.	2017թ.	+/-
Խոշոր եղջերավոր	29218	31213	-1995
այդ թվում՝ կովեր	13121	14042	-921
խոզեր	15233	15574	-341
Ոչխարներ և այծեր	13923	16028	-2105
Մեղվաղնտանիքներ	20666	20449	+217

Թոշուներ	187588	191391	-3803
----------	--------	--------	-------

Մարզում գործում են հետևյալ տոհմային տնտեսությունները.

- <<ՀիմնաՏավուշ>> զարգացման հիմնադրամի Լուսաձորի անասնաբուծական համալիր /150 գլուխ Սիմենթալ, Ջերսեյ/ և 6 համայնքներում անասնաբուծական մինի ֆերմաներ:

2018թ. ներկրվեց և 40 գլուխ Ջերսեյ ցեղատեսակի երինջներ:

- Դիլիջանի <<Դիլի>> ՍՊԸ /80 գլուխ Սիմենթալ/:

2018թ. նախատեսվում է <<Տավուշի մարզի ինտեգրված և հավասարակշռված տնտեսական զարգացում>> ծրագրի շրջանակներում հիմնել տոհմային անասնաբուծական կենտրոն /100գլուխ Սիմենթալ/ և հավաքուծական տնտեսություն:

Տավուշի մարզպետ Վ.Ղալումյանը առաջարկեց համայնքների ղեկավարներին.

1. Աջակցել հողօգտագործողներին բերքահավաքի՝ հատկապես արտինձի և խոտինձի աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:
2. Աջակցել <<Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռք բերման ծրագրին>> հողօգտագործողների մասնակցությանը:
3. Ակտիվացնել աշխատանքները << կառավարության , միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերը համայնքում իրագործելու համար, այդ աշխատանքներին ներգրավելով նաև անհատ ներդրողներին:
4. Հանձնարարականի կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վ.Սուքոյանի վրա:

<< ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ՝



Վ.ՂԱԼՈՒՄՅԱՆ

